Տասներորդ հաղորդում

Աստվածամարդկանց՝ Աստծու աստվածայնությանը մասնակցելու աստվածային իրավունքը

Գրվածքների ընթերցում. Հվի 3:15, Հռմ 8:14, 16, 23, 29-30,
Բ Կրթ 3:18, Եփս 1:4-5, Ա Հվի 3:2

I. Մենք պետք է գիտակցենք, որ որպես Աստվածամարդիկ, մենք Աստծու աստվածայնությանը, այսինքն՝ Աստծուն մասնակցելու աստվածային իրավունք ունենք՝ Հվի 3:15, Բ Պտ 1:4.

Ա. Աստվածամարդ դառնալու առաջին քայլն այն է, որ մենք ծնվում ենք պնևմատիկ Քրիստոսից մեր հոգում Նրա աստվածային կյանքով և բնությամբ՝ Հվի 3:6, Բ Պտ 1:4:

Բ. Որպես Աստվածամարդիկ, այսինքն՝ որպես նրանք, ովքեր ծնվել են Աստծուց՝ Աստծու զավակները դառնալով, մենք իրավունք ունենք մասնակցելու այն բանին, ինչ Աստված է, և նույնիսկ դառնալու Աստված կյանքով, բնությամբ և արտահայտությամբ, բայց ոչ Աստվածությամբ՝ Հվի 1:12-13, Հռմ 8:16, Ա Հվի 3:1:

II. Որպես Աստվածամարդիկ՝ մենք կարող ենք մասնակցել Աստծու աստվածայնության տարբեր տեսանկյուններին.

Ա. Մենք կարող ենք մասնակցել Աստծու կյանքին՝ Եփս 4:18, Հվի 1:4, 10:10, 11:25.

1. Կյանքն Աստծու բովանդակությունն է և Աստծու արտահոսելը. Աստծու բովանդակությունն Աստծու էությունն է, իսկ Աստծու արտահոսելը Նրա՝ որպես կյանքի ներդրվելն է մեր մեջ՝ Հյտ 22:1:
2. Աստծու կյանքն աստվածային է, քանի որ ունի Աստծու բնությունը, և հավիտենական է, քանի որ անստեղծ է, չունի սկիզբ ու վերջ, ինքնագո, մշտագո և անփոփոխ է՝ Հվի 3:15, Ա Հվի 2:25, 5:13, 20:
3. Աստծու հավիտենական կյանքը անխորտակելի, անխախտելի և անապական է, և դա հարության կյանքն է, որն անցավ մահվան ու դժոխքի ստուգմամբ, հաղթեց մահին և կլանելու է նրան՝ Եբր 7:16, Գրծ 2:24, Հյտ 1:18:
4. Կյանքը պատրաստված ու ավարտունացած Եռամեկ Աստված է, որ բաշխվում է մեր մեջ և ապրում է մեր մեջ՝ Հռմ 8:6, 10-11:

Բ. Մենք կարող ենք մասնակցել Աստծու բնությանը՝ Եփս 1:4, Բ Պտ 1:4.

1. Աստվածային բնությունն այն է, ինչ Աստված է, այսինքն՝ Աստծու էության բաղադրիչները:
2. Աստված սուրբ է, սրբությունը Նրա բնությունն է, և Նա մեզ ընտրեց Քրիստոսի մեջ, որպեսզի մեզ նույնքան սուրբ դարձնի, որքան Ինքն է՝ Եփս 1:4, Ա Պտ 1:15-16.
   ա. Սուրբ լինել նշանակում է մասնակցել Աստծու սուրբ բնությանը՝ Եփս 1:4:

բ. Ընտրելով մեզ, որ սուրբ լինենք, Աստված մեզ սուրբ է դարձնում՝ ներդնելով Իրեն՝ Սրբին, մեր էության մեջ, որպեսզի մեր ողջ էությունը հագենա և ներթափանցվի Նրա սուրբ բնությամբ՝ Ա Պտ 1:15-16:

3. Աստծու աստվածային բնությանը հաղորդակից լինել նշանակում է հաղորդակից լինել Աստծու էության տարրերին, բաղադրիչներին՝ Եփս 3:8:
4. Օրեցօր մենք պետք է հաղորդ լինենք Աստծու բնությանն ու վայելենք Նրա էության կազմությունը՝ Բ Պտ 1:4:

Գ. Քանի որ մենք վերածննդի միջոցով Աստվածամարդիկ ենք դարձել, մենք իրավունք ունենք մասնակցելու Աստծու մտքին՝ Ա Հվի 2:27, Փլպ 2:5, Ա Կրթ 2:16.

1. Մենք Աստծու մեջ ենք և ունենք Աստծու տարրերը. մենք նախկինի պես ունենք մեր միտքը, բայց մեր մեջ ունենք նաև Աստծու միտքը՝ Փլպ 2:5:
2. Երբ օծությունը շարժվում է մեր ներսում, այն մեր մեջ է ներդնում Աստծուն և մեզ համար բացահայտում Աստծու միտքը՝ Ա Հվի 2:27:
3. Եթե թույլ տանք, որ Քրիստոսի միտքը լինի մեր միտքը, կկարողանանք ունենալ Քրիստոսի միտքը՝ Փլպ 2:5.
   ա. Մենք ունենք ոչ միայն Քրիստոսի կյանքը, այլև Քրիստոսի միտքը՝ Ա Կրթ 2:16:
   բ. Քրիստոսը պետք է հագեցնի մեր միտքը մեր հոգուց՝ այդպիսով մեր միտքը մեկ դարձնելով Իր մտքի հետ՝ խ. 16, Եփս 4:23:

Դ. Աստվածամարդիկ իրավունք ունեն մասնակցելու Աստծու էությանը՝ Բ Կրթ 3:18.

1. Դա ասելու համար հիմք է ծառայում Բ Կրթ 3:18-ում Պողոսի ասածը այն մասին, որ մենք փոխակերպվում ենք Աստծու բուն էության միջոցով:
2. Մեր մեջ Քրիստոսի անքննելի հարստության բաշխումը նշանակում է, որ մենք մասնակցում ենք ոչ միայն Աստծու կյանքին, բնությանը և մտքին, այլև Նրա էությանը՝ Եփս 3:8:

Ե. Որպես Աստվածամարդիկ՝ մենք Աստծու պատկերին մասնակցելու իրավունք ունենք՝ Բ Կրթ 3:18.

1. Քրիստոսն Աստծու պատկերն է, որն արտահայտում է այն, ինչ Աստված է՝ Կոս 1:15, Բ Կրթ 4:4:
2. Բ Կրթ 3:18-ի համաձայն՝ մենք «նույն պատկերին ենք փոխակերպվում»:
3. Նույն պատկերին փոխակերպվել նշանակում է կերպարանակցվել հարուցանված Քրիստոսին՝ որպես Աստծու անդրանիկ Որդուն, դառնալով նույնը, ինչ Նա է՝ Հռմ 8:29:

Զ. Ի վերջո մենք կբերվենք Աստծու փառքի մեջ, որպեսզի մասնակցենք Նրա փառքին՝ Եբր 2:10.

1. Աստված փառքի Աստված է. փառքն Աստծու արտահայտությունն է, պերճության մեջ արտահայտված Աստված՝ Գործ 7:2, Ա Կրթ 2:7, Բ Կրթ 3:18, 4:6:
2. Աստծու հավիտենական նպատակն Իր բազում որդիներին փառքի մեջ բերելն է՝ Եբր 2:10:
3. Համաբովանդակ Քրիստոսը բնակվում է մեր մեջ՝ որպես փառքի հույսը՝ Կոլ 1:27:
4. Երբ մենք հայում ենք Տիրոջ փառքին ու անդրադարձնում այն, փոխակերպվում ենք Տիրոջ պատկերին փառքից փառք՝ Բ Կրթ 3:18:

Է. Աստվածամարդկանց աստվածային իրավունքի մեկ այլ տեսանկյուն է Աստծու որդիությանը մասնակցելը՝ Եփս 1:5, Հռմ 8:23.
1. Նախքան աշխարհի հիմնադրումը՝ անցյալ հավիտենությունում, Աստված մեզ որդիության նախասահմանեց՝ Եփս 1:5:
2. Նախքան ժամանակի սկիզբը Աստված մտահղացել ու որոշել էր, որ մենք պետք է մասնակցենք Նրա որդիությանը՝ խ. 5:
3. Քրիստոսի փրկագնումը մեզ բերում է Աստծու որդիության մեջ, և մենք ստացել ենք որդիության հոգի՝ Աստծու Որդու Հոգու հետ միաձուլված մեր վերածնված մարդկային հոգին՝ Գոտ 4:6, Հռմ 8:15:

Ը. Աստվածամարդկանց՝ Աստծու աստվածայնությանը մասնակցելու իրավունքը ներառում է Աստծու հայտնի դարձվելուն մասնակցելու իրավունքը՝ խ. 19.
1. Երբ Քրիստոսը՝ մեր կյանքը, հայտնի դարձվի, մենք էլ Նրա հետ փառքի մեջ հայտնի կդարձվենք՝ Կոլ 3:4:
2. Երբ Աստված հայտնի դարձվի, մենք՝ Աստծու որդիներս, կմասնակցենք այդ հայտնի դարձվելուն՝ Հռմ 8:19:
3. Աստված հայտնի կդարձվի Իր որդիների հետ (Եբր 2:10), որոնք կլինեն նույնը, ինչ Նա է, կյանքով, բնությամբ, մտքով, էությամբ, պատկերով ու փառքով (Հռմ 8:19):

Թ. Աստվածամարդկանց՝ Աստծու աստվածայնությանը մասնակցելու աստվածային իրավունքը ներառում է Աստծու նմանությունն ունենալու իրավունքը՝ Ա Հվի 3:2.
1. Ա Հվի 3:2-ում ասվում է. «Գիտենք, որ եթե Նա հայտնի դարձվի, Նրա նման կլինենք, որովհետև Նրան կտեսնենք, ինչպիսին որ Նա է»:
2. Երբ Քրիստոսը հայտնի դարձվի, Եռամեկ Աստված հայտնի կդարձվի. երբ տեսնենք Նրան, կտեսնենք Եռամեկ Աստծուն, և երբ Նրա նման լինենք, կլինենք Եռամեկ Աստծու նման՝ խ. 2.
   ա. Սա հստակորեն բացահայտում է, որ մենք ունենալու ենք Նրա նմանությունը:
   բ. Մենք ոչ միայն մասնակցելու ենք Աստծու կյանքին և Աստծու բնությանը, այլև ունենալու ենք նրա նմանությունը՝ Եփս 4:18, Բ Պտ 1:4, Ա Հվի 3:2:

Ժ. Վերջապես՝ Աստվածամարդիկ ունեն աստվածամարդկային տեսակը՝

ԱՍՏՎԱԾԱՄԱՐԴԿԱՆՑ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Աստծու կենսաբանական տեսակը լինելու աստվածային իրավունք՝ Հվի 1:12-13, Հռմ 8:14, 16.

1. Աստված մարդ դարձավ, որպեսզի մտնի մարդկային կենսաբանական տեսակի մեջ, իսկ մարդը դառնում է Աստված կյանքով և բնությամբ, բայց ոչ Աստվածությամբ, որպեսզի մտնի Աստծու աստվածային կենսաբանական տեսակի ոլորտ՝ Հվի 1:1, 12-14, Բ Պտ 1:4:
2. Որպեսզի մտնենք աստվածային ոլորտ՝ աստվածային կենսաբանական տեսակի ոլորտ, մենք պետք է ծնվենք Աստծուց և աստվածային կյանք ու աստվածային բնություն ստանանք՝ Հվի 1:12-13, 3:3, 5-6, 15, Բ Պտ 1:4.
   ա. Մենք վերածնվել ենք, որպեսզի լինենք Աստծու կենսաբանական տեսակը և դառնանք աստվածամարդկային տեսակը՝ Հվի 1:12-13:
   բ. Մեր երկրորդ ծննդի՝ վերածննդի արդյունքում մենք Աստծու թագավորություն մտանք՝ դառնալով Աստծու կենսաբանական տեսակը՝ 3:3, 5-6:
   գ. Աստծու բոլոր զավակները աստվածային կենսաբանական տեսակի աստվածային ոլորտում են՝ 1:12-13, 3:3, 5:
   դ. Հովհաննեսի Ավետարանում աստվածային կենսաբանական տեսակի աստվածային ոլորտում հավատացյալների ապրելակերպի շատ տեսանկյուններ ենք տեսնում՝ 1:16, 15:4ա, 9, 11, 4:23-24, 14:2, 20, 23, 17:22-24:
3. Որտեղ էլ լինենք, պետք է հիշենք, որ մենք Աստվածամարդիկ ենք, որոնք ունեն Աստծու աստվածայնությանը մասնակցելու աստվածային իրավունք՝ Կող 3:4, Եփս 1:4-5, Բ Կրթ 3:18, Բ Պտ 1:4:

© 2023 Living Stream Ministry